

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

և

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆԱՂՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Վրաստանի կառավարությունը, որոնք այսուհետեւ կանվանվեն «Կողմեր», ելնելով հարկային օրենսդրության պահպանման հարցերում միջազգային համագործակցության եւ փոխօգնության կարևորությունից եւ ցանկանալով այդ նպատակով հնարավորին չափ աջակցել միմյանց, համաձայնվեցին ներքոհիշյալի մասին:

Հոդված 1

Տերմինների սահմանումը

Սույն Համաձայնագրի նպատակների համար կիրառվող տերմինները նշանակում են՝

«հարկային օրենսդրություն» - տվյալ Կողմի տարածքում հարկերի տեսակները եւ դրանց գանձման կարգը սահմանող եւ հարկային պարտավորությունների առաջացման, փոփոխման եւ դադարեցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավաբանական նորմերի ամբողջություն,

«Հարկային օրենսդրության խախտում» - հակաիրավական գործողություն կամ անգործունեություն, որն արտահայտվում է հարկատուի կողմից բյուջեի հանդեպ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մեջ, որի համար սահմանված է իրավաբանական պատասխանատվություն,

«Իրավասու հարկային մարմիններ»՝

Հայաստանի Հանրապետության առնչությամբ՝ Հայաստանի
Հանրապետության հարկային տեսչությունը,
Վրաստանի առնչությամբ՝ Վրաստանի պետական հարկային
ծառայությունը,

«Հարցում անող հարկային ծառայություն» - հարկային հարցերով աջակցելու վերաբերյալ հարցում անող Կողմի իրավասու հարկային մարմինը (այսուհետեւ՝ «աջակցության մասին հարցում»),

«Հարցումը ստացող հարկային ծառայություն» - հարկային հարցերով աջակցելու վերաբերյալ հարցումը ստացող Կողմի իրավասու հարկային մարմին

Հոդված 2

Համաձայնագրի կիրառման ոլորտ

Կողմերը հարկային իրավասու մարմինների միջոցով, հարկային օրենսդրության պատշաճ կատարումն ապահովելու նպատակով փոխադարձ աջակցում են միմյանց՝

- հարկային օրենսդրության խախտումները կանխելիս եւ խափանելիս,
- աջակցության մասին հարցումով կամ նախս ձեռնության կարգով իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից հարկային օրենսդրությունը կատարելու վերաբերյալ տեղեկացնելիս,
- ազգային հարկային համակարգերի եւ հարկային օրենսդրության ընթացիկ փոփոխությունների մասին տեղեկացնելիս,
- հարկային մարմինների աշխատանքն ապահովող համակարգչային համակարգեր ստեղծելիս եւ բանեցնելիս,
- հարկ վճարողների եւ հարկային մարմինների հետ աշխատանքը կազմակերպելիս, ներառյալ հարկային օրենսդրության պահպանման վերահսկողության ապահովման վերաբերյալ մեթոդական ցուցումների մշակումը,
- կադրերի ուսուցման եւ մասնագետների փոխանակման բնակավառում,
- համատեղ գործողություններ պահանջող այլ հարցերում՝

Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչնդատում իրավասու հարկային մարմինների համագործակցությանը Կողմերի միջեւ կնքված այլ համաձայնագրերին համապատասխան:

Հոդված 3

Աջակցության մասին հարցման ձեւն ու բովանդակությունը

Աջակցության մասին հարցումը ուղարկվում է գրավոր՝ կցելով բննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Արտակարգ իրավիճակում աջակցության մասին հարցումը կարող է արվել բանավոր, հետագայում հնարավոր կարճ ժամկետներում այդ մասին գրավոր հաստատելով:

Աջակցության մասին հարցումը պետք է ընդգրկի՝

- հարցում անող հարկային ծառայության անվանումը,
- հարցումը ստացող հարկային ծառայության անվանումը,
- հարցապնդման նպատակն ու պատճառը,
- հարկ վճարողի անվանումն (անունն) ու հասցեն, որի նկատմամբ արվում է հարցումը:
- հարցման էության եւ դրա հետ կապված իրավաբանական հանգամանքների հակիրճ շարադրանքը, նշելով դիտարկվող ժամանակաշրջանը եւ հարկի կոնկրետ տեսակները:

Հարցումը պետք է արվի ռուսերեն: Կողմերի խնդրանքով տրամադրվող նյութը կարող է քարգմանվել վրացերեն կամ հայերեն:

Հարցումը ստացող հարկային ծառայությունն իրավասու է լրացուցիչ տեղեկություններ պահանջել աջակցության մասին հարցման վերաբերյալ:

Հոդված 4

Աջակցության մասին հարցումը կատարելու կարգը

Իրավասու հարկային մարմինները միմյանց աջակցում են ազգային օրենսդրությանը համապատասխան եւ իրենց իրավասության սահմաններում:

Հարցում անող հարկային ծառայությունը կարող է իր խնդրանքով ծանուցվել աջակցության մասին հարցումը կատարելու համար իրականացվող գործողությունների անցկացման ժամանակի եւ տեղի մասին, իսկ նրա ներկայացուցիչները՝ լրացուցիչ համաձայնության դեպքում, կարող են ներկա լինել դրանց անցկացմանը:

Եթե աջակցության մասին հարցումը չի կարող կատարվել հարցում ստացող հարկային ծառայության կողմից, նա հարցումն ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է հարցում անող հարկային ծառայությանը՝ նշելով աջակցելը մերժելու պատճառները:

Աջակցելու մասին հարցումը կարող է մերժվել, եթե դրա կատարումը հակասում է հարցում ստացող Կողմի հարկային օրենսդրությանը կամ պրակտիկային:

Հոդված 5

Տրամադրվող տեղեկության բովանդակությունը

Իրավասու հարկային մարմինները սեփական նախաձեռնությամբ կամ աջակցության մասին հարցումով միմյանց տրամադրում են հետևյալ տեղեկությունները,

- ձեռնարկությունների, դրանց մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գրանցման, ներառյալ՝ գտնվելու վայրի, ենթակայության, սեփականության ձևի եւ այլնի վերաբերյալ,
- իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից պետական ու առևտրային բանկերում հաշիվներ բացելու, ինչպես նաեւ դրանցում լրամական միջոցների առկայության ու շարժման վերաբերյալ,
- տվյալ Կողմի տարածքում իրավաբանական ու ֆիզիկական անձանց ստացած բոլոր տեսակի եկամուտների եւ հարկման օբյեկտների, հարկերի վճարված գումարների եւ հարկման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ:

Հոդված 6

Փաստաթղթերի եւ այլ նյութերի ներկայացնելը

Հարցում ստացող հարկային ծառայությունը աջակցության մասին հարցման համաձայն ներկայացնում է նորմատիվ ակտեր, փաստաթղթերի վավերացված պատճեններ եւ այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են հարկային հետաքննություն կատարելու համար:

Փաստաթղթերի եւ այլ նյութերի բնօրինակները կարող են պահանջվել վավերացված պատճենները հետաքննության համար բավարար չլինելու դեպքում: Փաստաթղթերի եւ այլ նյութերի փոխանցվող բնօրինակները պետք է վերադարձվեն համաձայնեցված ժամկետներում:

Նյութերը կարող են տրամադրվել համակարգչային տեղեկության տեսքով՝ լրացուցիչ փոխանցելով այդ նյութերի մեկնաբանման համար անհրաժեշտ օժանդակ տեղեկություն:

Անհրաժեշտության դեպքում մի Կողմի հարկային մարմինները իրավաբանական եւ ֆիզիկական անձանց՝ մյուս Կողմում հարկման համար պահանջվող, փաստաթղթերը վավերացնում են առանց վերադաս հարկային մարմինների հետ լրացուցիչ համաձայնեցնելու:

Հոդված 7

Տեղեկությունը փոխանցելու կարգը

Աջակցության մասին հարցումները, փաստաթղթերը, նյութերը եւ այլ տեղեկությունը փոխանցվում է Կողմերի համաձայնությամբ որոշվող կարգով:

Աջակցությունն իրականացվում է իրավասու հարկային մարմինների ղեկավարների կողմից որոշված պաշտոնատար անձանց ուղղակի կապերի շրջանակներում:

Հոդված 8

Գաղտնիության պահպանումը

Կոնկրետ հարկ վճարողներին վերաբերող տեղեկությունը համարվում է գաղտնի եւ ապահովվում է հարցում ստացող հարկային ծառայության պահույններին համապատասխանող պաշտպանության ռեժիմով:

Ստացած տեղեկությունը Կողմերը կարող են օգտագործել միայն սույն համաձայնագրով նախատեսված նպատակների, այդ թվում նաեւ վարչական կամ դատական քննության համար: Տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակների համար միայն հարցում ստացող Կողմի համաձայնությամբ:

Հոդված 9

Համաձայնագրի կառարությունը

Սույն Համաձայնագիրը մեկնաբանելիս կամ կիրառելիս ծագող վիճելի հարցերը կարգավորելիս Կողմերը կձգտեն հասնել փոխհամաձայնության:

Անհրաժեշտության դեպքում Կողմերը, սույն Համաձայնագրի իրացման ընթացքի եւ նրա մեջ փոփոխություններ կատարելու նպատակահարմարության գնահատման համար, կանցկացնեն խորհրդատվություններ: Այդպիսի խորհրդատվությունների ժամկետները Կողմերը որոշում են լրացուցիչ:

Հոդված 10

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը եւ գործողությունը դադարեցնելը

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ներառակ սն ընթացակալի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցման օրվա ից եւ դադարեցնում է իր գործողությունը այն օրվանից վեց ամիս լրանալուց հետո, երբ Կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կհայտնի նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կնքված է ք. Երեւանում «14» հունվարի 1997 թ. երկու բնօրինակ ւց, յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն եւ ռուսերեն լեզուներով, ընդ որում ել եր տեքստերն էլ համագոր են: Սույն Համաձայնագրի հայերեն եւ վրացերեն տեքստերի վերաբերյալ Կողմերի միջև տարաձայնություններ առաջանա լու դեպքում, հիմք կընդունվի Համաձայնագրի ռուսերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Կառավարության կողմից

Ն. Ն. Ն. Ն.

ՎՐԱՍՏԱՆԻ
Կառավարության կողմից

Վ. Վ. Վ.